ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Bookmark

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԸ

Bookmark

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Նաիրա Սահակյան

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԸ

1917-ի հեղափոխություններն ու Հայաստանի ապագան
հայ մտավորականության ընկալմամբ

ԵՐԵՎԱՆ
2023

Bookmark

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 537

Սահակյան Նաիրա
Ս 150 Խաղաղության հայկական գինը: 1917-ի հեղափոխություններն ու Հայաստանի ապագան հայ մտավորականության ընկալմամբ / Ն. Սահակյան.- Եր.: Newmag, 2022.- 304 էջ.- («Մինասյան» մատենաշար):

Հայ միտքը 100 տարի առաջ ներշնչված էր եվրոպական արժեքներով: Առաջ սոցիալիզմն էր, այժմ՝ ժողովրդավարությունը: 100 տարի առաջ էլ, այսօր էլ գլխավոր հարցը մնում է նույնը՝ ի՞նչ հարաբերություններ կառուցել Ռուսաստանի հետ:

Օսմանյան, իրանական ու ռուսական կայսրություններում հայերն անցած դարասկզբին ակտիվորեն մասնակցում էին ապագային միտված գաղափարական քննարկումներին: 1917-ի կովկասյան իրադարձություններն ի ցույց դրեցին հայ քաղաքական գործիչների և մտավորականների գաղափարական տարբերությունները: Վերահիմաստավորվեց Կովկասի դերը: Այն հայոց հնագույն թագավորության մասնիկն էր, հետևաբար հայկական ինքնավար գոյության, հետո նաև՝ պետության վերականգնման տարածքը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-884-77-6
Նաիրա Սահակյան «Խաղաղության հայկական գինը, © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Հասարության-Մինասյան» հիմնադրամին:

ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գիրքը հրատարակվել է «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի «Վերաիմաստավորելով 20-րդ դարի հայոց պատմությունը» պատմագիտական դրամաշնորհով:

«Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամը ստեղծվել է 2018 թվականի փետրվարին՝ անվանի ճարտարապետ, պետական և հասարակական գործիչ Գրիգոր Հասրաթյանի և անվանի գիտնական, քաղաքագետ, պետական գործիչ Միքայել Մինասյանի հիշատակին:

Հիմնադրամի «Մինասյան» մատենաշարն աջակցում է պատմագիտական, հետազոտական նախագծերին, որոնք հնարավորություն են տալիս վերաիմաստավորել 20-րդ դարի Հայաստանի պատմությունը:

Bookmark

Նվիրում եմ
Հայաստանի և Արցախի
հանրապետությունների համար
պայքարողներին:

Bookmark

Բովանդակություն

Հեղինակի կողմից՝ թարգմանության,
տառադարձման և ուղղագրության վերաբերյալ 11
Ներածություն 13

Գլուխ առաջին Ռուսական կայսրության կործանումն
ու Կովկասը 39
Գլուխ երկրորդ Հայ մտավորականության
«սոցիալիզմ»-ները 81
Գլուխ երրորդ Լենինն ու Արևմտյան Հայաստանի
խնդիրը 125
Գլուխ չորրորդ Ինքնավարության որոնումներում.
ազգ, լեզու, տարածք 165

Եզրակացություն 219
Երախտագիտության խոսք 227
Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 231
Լուսանկարների աղբյուրներ 267
Ծանոթագրություններ 269

Bookmark

Հեղինակի կողմից՝ թարգմանության, տառադարձման և ուղղագրության վերաբերյալ

Աշխատանքում օգտագործված օտարալեզու աշխատանքների թարգմանությունները հեղինակինն են, եթե այլ նշում չկա:

Գրքում օգտագործված հայերեն սկզբնաղբյուրները գրվել են մի քանի ուղղագրությունների հաստատման և վերափոխման ժամանակահատվածում (սկզբնաղբյուրները հիմնականում հեղինակվել են մինչև 1922 թվականի ուղղագրական բարեփոխումները, մի մասն էլ՝ մինչև 1940 թվականի փոփոխությունները): Մեջբերումների ժամանակ այս տարբեր ուղղագրությունները կարող են դժվարություն առաջացնել, ուստի բոլոր մեջբերումները փոխարկվել են արևելահայերեն արդի ուղղագրության, թեև փոխված չեն հեղինակների օգտագործած բառերը, եթե նույնիսկ կան դրանց հայերեն տարբերակները, քանի որ տեքստի մեջ բառերի ընտրությունը մշակութային միջավայրի ու համատեքստի ցուցիչ է:

Սկզբնաղբյուրների ուղղագրությունը պահպանվել է հղումների մեջ. հղումներում թե՛ հեղինակների անունները, թե՛ նյութի վերնագրերը նշվում են սկզբնաղբյուրի ուղղագրությամբ: Սա հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում հեշտորեն գտնել այդ սկզբնաղբյուրները:

Երկրորդային աղբյուրների դեպքում, որոնք հիմնականում անգլերեն և ռուսերեն են, հղումներում պահպանվել են լատինատառն ու կիրիլիցան: Բացառություն են կազմում արաբերեն և արաբատառ թյուրքալեզու հղումները, որոնց դեպքում

արաբերենը տառադարձվել է լատինատառի, որի համար օգտագործվել է Բրիլլի՝ արաբերենի տառադարձման համակարգը:

Bookmark

Ներածություն

Այս աշխատանքը հետազոտում է 1917 թվականի ռուսական հեղափոխությունների օրերին հայ մտավորականության պատկերացումները Հայաստանի ապագայի վերաբերյալ: Գրքի առանցքում հայ մտավորականության միջև գաղափարական տարբեր հոսանքների և նրանց ու արտաքին գաղափարական ազդեցության կենտրոնների փոխառնչություններն են և համընկնումները:

1917 թվականին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխություններից առաջ, ի թիվս այլ գաղափարների, բարեփոխումների անհրաժեշտությունը, պետության մոդելները և սոցիալիստական հասարակության մասին գաղափարները տարածվել էին Օսմանյան և Ռուսական կայսրություններում (և դրանցից դուրս):

Տեղական մակարդակներում մտավորականները դրանք հարմարեցնում էին իրենց հայեցակարգային և ավանդական միջավայրին: Միաժամանակ այդ գործիչները դարձան ոչ միայն նոր գաղափարները ստացողներ, այլև փոխանցողներ և դրանց հիման վրա նոր գաղափարներ կերտողներ: Տեղեկությունների այս հորձանուտի մեջ մեկ գործիչը միաժամանակ արձագանքում էր բազմաթիվ ազդակների: Այդ ազդակներն ուղարկողների հաջողությունը, այնուամենայնիվ, կախված էր ստացողի՝ լոկալ գործչի զինանոցից (լեզվի իմացությունը, որոշակի ավանդույթների ու արժեհամակարգային կոդերի հետևելը): Այդ իմաստով հայ մտավորականները